ԷՋԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ

XVII դարի սկզբին պարսկական գահակալներից Շահ Աբաս I-ը Արևելյան Հայաստանի բնակչության մի մասը գաղթեցրեց Իրանական սարահարթ Սպահանի մոտ հիմնադրվեց Նոր-Ջուղա քաղաքը, որն սկսեց զգալի դեր խաղալ Պարսկաստանի արտաքին առևտրի ասպարեզում։ Նոր-Ջուղայում հիմնավորված հայ վաճառականները սկսեցին շրջանառության մեջ դնել ոչ միայն իրենց սեփական դրամագլուխները «կոնթերը», այլև շահական գանձարանի հարստությունները, որը և հնարավորություն տվեց նրանց ոչ միայն բազմապատկելու իրենց հարստությունները, այլև ակնառու դեր խաղալու պարսկա-եվրոպական առևտրում։ Եվրոպական վաճառականների օրինակով հայ վաճառականները ևս համախմբվեցին առևտրական ընկերության մեջ, որը կրում էր «Ջուղայի հայ առևտրական ընկերություն» անունը։ Ջուղայեցի վաճառականների այս ընկերությունը նույնիսկ առևտրական հարաբերությունների մեջ էր մտնում օտար պետությունների և կամ ուրիշ առևտրական ընկերությունների հետ։ Այդ տեսակետից նշանավոր էին 1667 թվականին ռուսական կառավարության և 1688 թ. անգլիական «Օստ-Հնդկական ընկերության» հետ կնքված պայմանագրերը։

Եթե բուն Հայաստանում՝ անվերջ պատերազմների, արհեստագործության և գյուղատնտեսության անկման, հարկային դաժան քաղաքականության հետևանքով վաճառականական կապիտալը համեմատաբար թույլ էր զարգացած և նշանակալից դեր չխաղաց երկրի ոչ տնտեսական և ոչ էլ քաղաքական զարգացման պատմության մեջ, ապա գաղթավայրերում՝ Նոր-Ջուղա, Սուրաթ, Մադրաս, Կալկաթա, Կոստանդնուպոլիս, Ամստերդամ, Աստրախան, Մոսկվա, Պետերբուրգ և այլն, այն տնտեսական բավականաչափ ազդեցիկ ուժ էր ներկայացնում, իսկ ազգային «սեփական» շուկայի բացակայությունը և օտարերկրյա վաճառականների հետ մղվող անխուսափելի մրցակցությունը օբյեկտիվորեն հայ առևտրական բուրժուազիային մղում էին դեպի քաղաքական գործունեության ասպարեզ։ Սա Հայաստանի աշխարհագրական սահմաններից դուրս իր ծաղկումն ապրած հայ վաճառականական կապիտալի բնորոշ առանձնահատկություններից մեկն էր՝ կապիտալի այսպես կոչված նախնական կուտակման ժամանակաշրջանում։

Հայրենիքից ճյուղատված և Նոր-Ջուղայում պատվաստված հայ վաճառականական կապիտալը այստեղից սկսում է իր համար ճանապարհ հարթել դե-

պի Ռուսաստան՝, Հնդկաստան և մասամբ էլ եվրոպական Թուրքիա։ Այդ հոսքը, որ փոքր չափերով սկսվել էր դեռևս XVII դարում, խիստ ուժեղացավ հաջորդ՝ XVIII դարում՝ պարսկական կենտրոնացված պետության քայքայման հետ մեկտեղ, որը բնականաբար հանգեցնում էր անիշխանության և բռնությունների հետագա ուժեղացմանը ֆեոդալական ներքին երկպառակությունների ասպարեզ դարձած երկրում։ XVIII դարի առաջին կեսին Նոր-Ջուղայի հայ առևտրական բուրժուազիան սկսում է իր դիրքերը փրկելու ելք փնտրել։ Ինչպես արդեն նշեցինք, դեռևս XVII դարի երկրորդ կեսից հայ վաճառականական կապիտալը սկսել էր դանդաղ, բայց հաստատուն քայլերով Աստրախանի վրայով ներթափանցել Ռուսաստան։ Աֆղանների 1722 թ. արշավանքը առաջին լուրջ հարվածը հասցրեց Նոր-Ջուղայի հայ վաճառականներին։ Նադիր շահի թագավորության տարիներին և մանավանդ նրա սպանությունից հետո (1747), երբ հարկային պարտականները հսկայական չափեր էին ընդունել, չհաշված անօրինական բռնագանձումները, այդ հոսքը էլ ավելի ուժեղացավ։

Նման պայմաններում հայ վաճառականները ստիպված էին ավելի հաստատուն կայաններ որոնել, որովհետև «...ի ժամանակս թագաւորութեանն Նադիրշահի գործացաւ բռնակալութիւնն ի Ջուղայ, և վաճառականք Ջուղայու մատնեալ տուժից և տուգանաց անհանդիստ լինէին...»[2]։ Այնուհետև Նոր-Ջուղայի պատմիչ Հ. Տեր-Հովհաննյանը շարունակում է. «Նադիր շահը ունելով բնաւորութիւն յոյժ ընչասէր և ագահ, և յաղագս գործականացն հարկ լինելով նմա պատրաստել զոռճիկս, ջուղայ տրնակ վաճառականացն հայոց հասոյց զմեծամեծ տառապանս, ստանալով ի նոցանէ բազում դումարս... արկանէ հարկս ի վերայ Նոր Ջուղայեցւոցն ի թուոյն 1739 մինչև ց1747, պահանջելով ամ ըստ ամէ անընդհատ զ պակաս բան զտասն հազար թուման մինչև ց 45000 թուման՝ գործս յամի միում միայն...»[3]։ Այստեղից էլ հայ վաճառականների՝ իրենց համար ավելի հաստատուն կայաններ գտնելու ձգտումը և հետևաբար մեծ չափեր ընդունող գաղթը դեպի Ռուսաստան և Հնդկաստան։ Բայց տարբեր բախտ էր վիճակված Նոր-Ջուղայի ծնունդ հանդիսացող այդ երկվորյակ եղբայրներին։ Եթե Հնդկաստանում հաստատված հայ առևտրական բուրժուազիան շատ շուտով ստիպված էր մահու և կենաց գոտեմարտի մեջ մտնել անգլիական կապիտալի ավելի հզոր, իր շահերի պաշտպանության համար պետական աջակցություն ու զորք ունեցող ներկայացուցիչների հետ և այդ նպատակով երբեմն մի կողմ դնել վաճառականի հաշվեկիրքն ու զորապետի սուր առնել ձեռքը՝ իր կենսական իրավունքները պաշտպանելու համար, ապա Ռուսաստանում հիմնավորված հայ առևտրական բուրժուազիան զարգացման բավականին լայն և նպաստավոր հորիզոններ գտավ իր առջև առանձնաշնորհումների պատճառով։

Առանձնաշնորհումները հետևանք էին այն մեծ շահագրգռության, որ առկա էր ցարական արքունիքում արևելյան, մասնավորապես Պարսկաստանի հետ կատարվող առևտրի նկատմամբ։ Դեռևս Ալեքսեյ Միխայլովիչ ցարի ժա-

1 Տե՛ս Վ. Կ. Ոսկանյան, Հայ-ռուսական հարաբերությունները XVII դարում, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 1, և Ա. Դ. Հովհաննիսյան, Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1։

2 Հ. Տեր-Հովհաննյան, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, Ն. Ջուղա, 1886, էջ 95։

3 Նույն տեղում, էջ 25։

մանակ ռուսական կառավարությունը աշխատում էր աշխուժացնել պարսկական առևտուրը, դյուրություններ ստեղծել ռուս վաճառականների համար։ Արդյունքը եղավ այն, որ 1664 թ. շահը առանձին հրամանագրով կարգադրեց օթևանի և խանութների համար մաքսեր չվերցնել ռուս վաճառականներից[4]։ Բայց, ըստ երևույթին, ռուս վաճառականները առանձնապես մեծ առևտրական կապեր չունեին Պարսկաստանի հետ, քանի որ շահական հրամանագրից երեք տարի անց պայմանագիր կնքվեց Ջուղայի հայ առևտրական ընկերության ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկենցի հետ, համաձայն որի Պարսկաստանում ստացվող մետաքսի հումույթը հայ վաճառականները պարտավորվում էին ներմուծել միայն և միայն Ռուսաստան, դրա փոխարեն ստանալով որոշ արտոնություններ[5]։

Այդ պայմանագիրը հարվածում էր ռուս վաճառականների շահերին, ուստի նրանք երկիցս (1672 և 1675 թթ.) գիմեցին դեսպանական ատենատուն՝ բողոքելով 1667 թ. պայմանագրի դեմ[6]։ Չնայած որոշ վերիվայրումներին, որոնք տեղի ունեցան հետագա շուրջ հինգ տասնամյակներում, ռուս-պարսկական առևտուրը բավականաչափ ընդարձակվեց, իսկ XVIII դարի 40-ական թթ. Պարսկաստանից հայ վաճառականական կապիտալի մեծ հոսք սկսվեց դեպի Ռուսաստան։ Այդ ժամանակաշրջանում հայկական հիմնական գաղթավայրերը Ռուսաստանում հանդիսանում էին Աստրախանը, Մոսկվան և Պետերբուրգը։

Աստրախանը այն առաջին հանգրվանն էր, որտեղ կանգ էին առնում Ռուսաստան գաղթած պարսկահայ վաճառականները, նախքան այլ վայրեր անցնելը։ 1730—40-ական թթ. Սպահանից և Ն. Ջուղայից Աստրախան էին գաղթել 24 ընտանիք, Արդաբիլից՝ 11, Թավրիզից՝ 8, Ղազվինից՝ 7։ Դրանց մեջ իրենց դրամագլուխներով առանձնապես աչքի էին ընկնում Թաթոս և Շուքրի Միխայլովները, Սերգեյ Իվանովը, Գալուստ Բունիաթովը, Դավիթ Գրիգորևը, Առաքել և Մարտիրոս Իվանովները, Խաչատուր Մելքումովը, որոնց ընդհանուր դրամագլուխը 1747 թ. կազմում էր մոտավորապես 37 հազար ռուբլի[7]։ Աստրախանի հայ գաղութում բնակչության շուրջ 40 տոկոսը արհեստավորներ էին։

Մոսկվայի հայ գաղութում աչքի էին ընկնում Մակարով եղբայրները, Իգնատի Ֆրանցև Շերիմանը։ Պետերբուրգում էին ծավալել իրենց գործառնությունները այնպիսի հարուստ վաճառականներ, ինչպես Լուկա Շիրվանովը, Մանուիլովը, Բսախանով եղբայրները, Մանուչարյան եղբայրները։ Վերջապես XVIII դարի 40-ական թթ. վերջերին Ռուսաստանում հայտնվեցին իրենց հարստությամբ և ձեռներեցությամբ հայտնի Լազարյանները։

Ձեռնարկելով Ռուսաստանի վերափոխմանը, Պետրոս I-ը մեծ ուշադրություն էր դարձնում մանուֆակտուրաների հիմնադրմանն ու զարգացմանը։ Ինչպես հայտնի է, նա երբեմն նույնիսկ բռնի միջոցներով աշխատում էր վաճառականական կապիտալի ներկայացուցիչներին քշել մանուֆակտուրային ընկերությունների մեջ։ Եթե Պետրոս I-ի ժամանակաշրջանում, երբ գոյություն ունեին դեռևս ներքին մաքսատները և համառուսական շուկան նոր-նոր էր սկր-

[4] А. Семенов, Изучение исторических сведений о русской внешней торговле и промышленности, ч. I, СПб, 1959, էջ 106։

[5] Տե՛ս «Полный свод законов Российской империи» (ПСЗРИ), т. I, № 409.

[6] Տե՛ս ПСЗРИ, т. I, №№ 514, 539.

[7] Ա. Յուիտ, Աստրախանի հայկական գաղութի բնակչության սոցիալական կազմը XVIII դարի առաջին կեսում, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 7, էջ 56—58։

սում կազմավորվել, առևտրական արագ շրջանառություններից մեծ շահ ստացող վաճառականական կապիտալը առանձին հակում չէր ցույց տալիս գնպի արդյունաբերությունը, հետագայում, դարի կեսերին, դրությունը հիմնովին պիտի փոխվեր։ Հետաքրքրական երևույթ է, որ, հակառակ դրան, Ռուսաստանում եղած բոլոր փոքրիշատե աչքի ընկնող հարստություն ունեցող հայ վաճառականները սկզբից ևեթ տենդենց էին ցույց տալիս ներդնելու իրենց կապիտալները ապրանքային արտադրության ոլորտը։

Մոսկվայում էր գործում հայտնի հայ վաճառական Իգնատի Ֆրանցի Շերիմանը։ Նա ծագումով նոր-ջուղայեցի էր։ Գալով Ռուսաստան՝ Մոսկվա, նա, 1721 թ., ընկերակցությամբ ազնվական-ֆաբրիկանտներ Ապրակսինի, Շաֆիրովի և Տոլստոյի, որոնք Պետրոս I-ի մերձավոր գործակիցներից էին, և ռուս վաճառական Եվրեինովի, ներդնելով 5000 ռուբլի՝ հանդիսացավ Մոսկվայի մետաքսագործական ֆաբրիկայի[8] հիմնադիրներից մեկը։ Մետաքսագործական մանուֆակտուրայի տարածման վրա Ռուսաստանում մեծ ուշադրություն էր դարձվում դեռևս Ալեքսեյ Միխայլովիչի օրերից։ Լինելով պերճանքի առարկաների արտադրության հիմնական ճյուղերից մեկը՝ մետաքսագործական մանուֆակտուրան մեծ թվով կապիտալներ էր ներգրավում։

Խոսելով վաճառականական կապիտալի՝ արդյունաբերականի վերածվելու ուղիների մասին Կ. Մարքսը գրում է. «...Անցումը կատարվում է երեք ձևով. առաջին՝ վաճառականն ուղղակի դառնում է արդյունաբերող. այս պատահում է առևտրի վրա հիմնված արհեստի ճյուղերում, հատկապես պերճանքի իրեր արտադրող ճյուղերում, որոնք վաճառականների կողմից ներմուծվում են արտասահմանից հումքի ու բանվորների հետ միասին, ինչպես տասնհինգերորդ դարում Կոստանդնուպոլսից Իտալիա։ Երկրորդ՝ վաճառականը մանր վարպետներին դարձնում է իր միջնորդները (middlemen) կամ թե ապրանքը գնում է հենց ուղղակի ինքնուրույն արտադրողից. նա սրան անվանապես ինքնուրույն է թողնում և արտադրության նրա եղանակն էլ թողնում է անփոփոխ։ Երրորդ՝ արդյունաբերողը դասնում է վաճառական և խոշոր չափերով արտադրում է ուղղակի առևտրի համար»[9]։ Ռուսաստանում, հատկապես մետաքսեղենի մանուֆակտուրայի բնագավառում, մենք տեսնում ենք անցման առաջին ուղին։ Մետաքսագործական ֆաբրիկաները Ռուսաստանում վաճառականների երախայրիքն էին հանդիսանում, իսկ քանի որ բուն Ռուսաստանում մետաքսագործության արհեստն անծանոթ էր, ուստի դրա վարպետները բերվում էին հիմնականում Պարսկաստանից և ապագայում մեծ մասամբ հայեր էին. հրավիրվում էին նաև Իտալացի վարպետներ։

1721 թ. հիմնված մետաքսագործական մանուֆակտուրայի կառավարումը ընկած էր Շերիմանի վրա, և նա հաջողությամբ էր վարում ֆաբրիկայի գործերը, ինչպես վկայում էր Շաֆիրովը Ապրակսինին գրած մի նամակում։ Բայց մի տարի անց Շերիմանը հեռացավ ընկերությունից՝ իր հետ վերցնելով շուրջ 23070 ռուբլու մետաքսի հումք, ներկանյութեր ու պատրաստի արտադրանք և Մոսկվայում հիմնեց իր սեփական մանուֆակտուրան[10]. 1733 թ. Շերիմանը

[8] С. М. Соловьев, История России с древнейших времен, т. XVI, СПб, изд. III, էջ 170—171։

[9] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, Երևան, 1947, էջ 323։

[10] Е. И. Заозерская, Развитие легкой промышленности в Москве в первой четверти XVIII в., Москва, 1953, էջ 308։

ֆաբրիկան տեղափոխեց Բոգորոդոսկի գավառի Ֆրյանովո գյուղը, որը գտնվել էր Ժելյաբովսկուց՝ 55 շունչ արական սեռի պատկանող ճորտ գյուղացիներով հանդերձ[11]։ Այսպես հիմք դրվեց մի մետաքսագործական ֆաբրիկայի, որը ժամանակին լավագույնը պետք է դառնար Ռուսաստանում։ Ըստ Պ. Գ. Լյուբոմիրովի բերած տվյալների, XVIII դարի 60-ական թթ. Մոսկվայում երեք մետաքսագործական ֆաբրիկաներ պատկանում էին հայ վաճառականների, իսկ երկուսում նրանք հանդես էին գալիս որպես բաժնետերեր[12]։ Մոսկվայի նշանավոր մետաքսագործարաններից էր նաև Վասիլի Խաստատովի ֆաբրիկան, որը սկզբնական շրջանում սրա և Լուկա Շիրվանովի կողմից հիմնադրվել էր Աստրախանում[13], իսկ հետագայում տեղափոխվել Մոսկվա։

Բնական էր, որ Աստրախանում ևս գարգանային մետաքսագործական մանուֆակտուրաները, քանի որ սա այն կետն էր, որտեղ նախապես ստացվում էր մետաքսի հումքը։ Եթե XVIII դարի առաջին քառորդում այստեղ մետաքսեղենի արտադրությունը դեռևս տնայնագործական բնույթ էր կրում, ապա նույն դարի 40-ական թվականներին ստեղծվում են առաջին մանուֆակտուրաները։ 1740 թ. սեպտեմբերի 17-ի սենատական հրամանագրի համաձայն Աստրախանում հիմնվեց առաջին մետաքսագործական մանուֆակտուրան հայ վաճառականներ՝ Մակարով եղբայրների, Լուկա Շիրվանովի և Դասպար Բոգդանովի կողմից, որոնք հետագայում՝ 1746 թ., ինչպես արդեն նշել ենք, այն փոխադրեցին Մոսկվա, ուր ի վերջո դարձավ Վասիլի Խաստատովի սեփականությունը[14]։ Մինչև 1783 թ. Աստրախանում արդեն կային 18 մետաքսագործական մանուֆակտուրաներ, որոնք մեծ մասամբ գտնվում էին հայ վաճառականների ձեռքում։ Վաճառական Բունիաթովների մանուֆակտուրայում կար 20 դազգահ։ Սակայն սրանք կառավարությունից ստացել էին միայն 20 հոգի և ստիպված էին դիմելու ազատավարձու բանվորական ուժի՝ մանուֆակտուրայի գործունեությունը ապահովելու համար[15]։ Կային նաև համեմատաբար փոքր, տնայնագործական բնույթի ձեռնարկություններ, ինչպես Իվանովինը՝ 3 դազգահով և Իվանիսով Վարագինը[16]։

1755 թ. Ռուսաստանում հիմնվեց թերևս առաջին ակցիոներական առևտրական ընկերությունը, որը Տեմերնիկի նավահանգստից առևտրական կապեր ուներ Կոստանդնուպոլսի, Իտալիայի, Վենետիկի և այլ վայրերի հետ։ Բաց էր թողնվել 200 ակցիա յուրաքանչյուրը 500 ռուբլի արժողությամբ։ Ընկերության մեջ չմտնող վաճառականներին արգելվում էր վերը թվարկված վայրերի հետ առևտուր կատարել[17]։ Այդ ընկերության «օրեր-դիրեկտորն» էր հայ վաճառական Վասիլի Խաստատովը (Մակարով)։

---

[11] Центральный государственный архив древних актов (ЦГАДА), ф. 1252, д. 3006, л. 28.

[12] П. Г. Любомиров, Очерки по истории русской промышленности, Москва, 1947, էջ 578։

[13] Архив внешней политики России (АВПР), ф. Сношения России с Арменией, оп. 100/1, д. № 2, л. 1 об.—5 об.

[14] П. Г. Любомиров, նշվ. աշխ., էջ 638։

[15] Е. И. Заозерская, Рабочая сила и классовая борьба на текстильных мануфактурах России в 20—60-х гг. XVIII в., Москва, 1960, էջ 298։

[16] П. Г. Любомиров, նշվ. աշխ., էջ 651։

[17] А. Семенов, նշվ. աշխ., էջ 173։

1752 թ. Նոր-Ջուղայից Պետերբուրգ գաղթած և ռուսական հպատակություն ընդունած Իսախանով եղբայրների ազերսագրի համաձայն՝ վեց տարի անց ստեղծվեց մի նոր ակցիոներական ընկերություն։ Նոր առևտրական ընկերությունը իրավունք էր ստանում Պարսկաստանի հետ մոնոպոլ առևտուր կատարելու, ընդ որում բաց էր թողնվում 4000 ակցիա, յուրաքանչյուրը 150 ռուբլի արժողությամբ։ Ընկերության «օրեր-դիրեկտորն» էր Մանվել Իսախանովը[18]։

Ցարական կառավարությունն իր հերթին մեծ շահագրգռվածություն էր ցույց տալիս նորանոր կապիտալներ գրավելու Ռուսաստան։ Այդ տեսակետից հետաքրքիր է Նոր-Ջուղայի վաճառականներից Թարխան Ադամայովի օրինակը։ Նադիր շահի սպանությունից հետո նա անցել էր Հնդկաստան, որտեղից վրաց Հերակլ II թագավորի հրավերով եկել էր Վրաստան և իր հարստության շնորհիվ իսկույն մեծ դիրք գրավել Հերակլի արքունիքում։ Սակայն ֆեոդալական անվերջ երկպառակությունների հետևանքով մշտական ընդհարումների թատերաբեմ դարձած Անդրկովկասը չէր կարող նպաստավոր պայմաններ ընձեռել առևտրական խոշոր շրջանառությունների համար, էլ չխոսենք այն մասին, որ այդտեղ այդ ժամանակ հնարավոր չէր փոքրիշատե զարգացնել մանուֆակտուրային արտադրություն։ Այդ հասկանալով՝ Ադամայովը որոշեց մեկնել Ռուսաստան և այդ նպատակով՝ Վրաստանում ռուսական ռեզիդենտ Լվովիչ հպատակության երդում տվեց։ Բայց Հերակլը չէր ուզում ձեռքից բաց թողնել հարուստ վաճառականին, որը բավական մեծ եկամուտ էր բերում արքունական գանձարանին։ Հարցի լուծմանը միջամուխ եղավ կանցլեր Ն. Ի. Պանինը։ Երկարատև գրագրություններից հետո վերջինիս հաջողվեց կոտրել Հերակլի համառությունը և հասնել Ադամայովի արձակմանը։ Այդ գործում քիչ դեր չխաղաց նաև Հովհաննես Լազարյանը, որը Հերակլի եղբայր Անտոնի (հետագայում վրաց կաթողիկոս) և որդի Լևանի միջոցով դիմեց իրենց՝ Հերակլին, խնդրելով թույլ տալ Ադամայովին տեղափոխվել Ռուսաստան։ 1774 թ. Ադամայովը տեղափոխվեց Ռուսաստան[19]։ Այս էպիզոդը ևս գալիս է վկայելու, որ ոչ միայն հայ վաճառականական կապիտալն էր ձգտում իր համար հաստատուն և ավելի ապահով կայաններ ստեղծել, այլև այդ հարցում շահագրգռված էր մեծ չափով նաև ցարական արքունիքը։

Ակներև է, որ XVIII դարի կեսերին հայ վաճառականական կապիտալը բավական ամուր դիրքեր ուներ Ռուսաստանում, այնքան ամուր, որ կարողանում էր առևտրական մոնոպոլիաներ վերցնել իր ձեռքը։ Սակայն վերադառնանք մանուֆակտուրային արտադրությանը։ Հայ վաճառականները մետաքսեղենի մանուֆակտուրաներ էին հիմնել նաև Պետերբուրգում։ Հայտնի էին Մանուիլովի, Բոգդան Հախվերդովի, Պետրոս Շիրվանովի և Մանուչարյան եղբայրների մետաքսագործական ֆաբրիկաները[20]։ Ռուսաստանը զուրկ էր մետաքսագործության համար անհրաժեշտ հումքի բազայից։ Այդ նպատակով մեկ արդեն ծանոթ Լուկա Շիրվանովը, Վասիլի Խաստատովը և մյուսները Աստրախանում ու Ղզլարի մերձակա վայրերում հիմք են դնում շերամապահությանը, տնկում են թթի այգիներ։ Նրանք նախաձեռնում են այդ վայրերում մացնելու

[18] АВПР, ф. «Сношения России с Арменией», оп. 100/1, д. № 1, л. 1—11.
[19] Տե՛ս ЦГАДА, ф. 1252, д. 1682, лл.: 147—156 об.
[20] Նույն տեղում, д. 19, лл.: 6—7.

նաև բրնձի և բամբակի կուլտուրաների մշակությունը։ Այդ հարցերում նրանք ստանում էին կառավարության օժանդակությունը, քանի որ վերջինս մեծ շահագրգռվածություն էր հանդես բերում այդ գործում։ Դեռևս 1710 թ. Պետրոս I-ը հայ վաճառական Սաֆար Վասիլևին արտոնություններ էր շնորհել վերոհիշյալ գյուղատնտեսական կուլտուրաների մշակությունը Թերեքի ափերին տարածելու համար[21]։ Ամուսնանալով նրա այրու հետ, 1747 թ. հունիսի 18-ին Լուկա Շիրվանովը ձեռք է բերում կայսերական հրամանագիր, համաձայն որի նրան վերապահվում էին ժամանակին Սաֆար Վասիլևին տրված բոլոր արտոնությունները[22]։ Այսպիսով հայ վաճառականները ոչ միայն ներդնում էին իրենց կապիտալը մանուֆակտուրային արտադրության մեջ, այլև աշխատում էին ստեղծել դրա համար անհրաժեշտ հումքային բազա։

1755 թ. կայսերական ռեգլամենտը վերացնում էր ներքին մաքսերը, փաստորեն ընդառաջելով ամբողջական համառուսական շուկայի ստեղծմանը։ Գնի միջև եղած տարբերությունները չնչվում էին, փոքրանում էր փոխանակության ոչ-էկվիվալենտայնությունը և այդպիսով հարվածի տակ էին դրվում առևտրական բարձր շահույթ ստանալու հնարավորությունները։ Միաժամանակ ստիճանաբար, թեև չափազանց դանդաղ, ընթանում էր մի այլ պրոցես արդյունաբերության բաժանումը գյուղատնտեսությունից, որի հետևանքով ընդարձակվում էր ապրանքային արտադրությունը։ Այս պարագան վաճառականական կապիտալի ներկայացուցիչների առջև բաց էր անում բարձր շահույթ ստանալու մի այլ և ավելի հիմնական աղբյուր՝ ապրանքային արտադրությունը և անմիջական արտադրողների շահագործումը՝ այս անգամ արդեն որպես վարձու բանվորական ուժ։ Աստրախանում, Մոսկվայում և Պետերբուրգում հայ վաճառականների XVIII դարում հիմնած մանուֆակտուրաները ցույց են տալիս, որ ոչ-էկվիվալենտային փոխանակության հետևանքով նրանց մոտ աստիճանաբար դրամագլուխներ էին կուտակվել, որոնք այժմ նրանք ներդնում էին ապրանքային արտադրության ոլորտը՝ հետապնդելով ավելի բարձր շահույթ ստանալու նպատակներ։

Եթե մինչև 60-ական թվականները շրջանառության ոլորտից արտադրության ոլորտը անցնող վաճառականական կապիտալի ներկայացուցիչները իրավունք ունեին ճորտեր գնել, կամ ճորտեր էին ստանում ֆաբրիկաներում աշխատեցնելու համար (չպետք է մոռանալ, որ ֆեոդալիզմի պայմաններում Ռուսաստանում խիստ սահմանափակ, աննշան էր ապատավարձու բանվորական ուժի շուկան), ապա 1762 թ. մարտի 29-ի հրամանագրով երրորդ դասի առջև փակվում էր այն փոքրաթիվ ուղիներից ամենակարևորը, որով նա անցում էր կատարում դեպի ապրանքային արտադրությունը։ Զրկվելով ճորտեր գնելու իրավունքից, ապատավարձու բանվորական ուժի համարյա թե բացակայության պայմաններում, վաճառականական կապիտալի համար խիստ դժվարանում էր դանկալի անցումը։

Պատմական այդ ժամանակաշրջանում իրենց գործառնությունները Ռուսաստանում ծավալած Լազարյանների օրինակը ցույց է տալիս, թե որքան ուժեղ էր մասնավորապես հայ առևտրական բուրժուազիայի մոտ ապրանքային արտադրության ասպարեզ մտնելու տենդենցը։ Ելիզավետա Պետրովնային մա-

21 С. М. Соловьев, նշվ. աշխ., հատ. XVIII, էջ 784։
22 АВПР, ф. «Сношения России с Арменией», оп. 100/1, д. 2, лл.: 1 об.— 5 об.

տուցված մի ազերսագրում Լազարյանները հետևյալ կերպ էին բացատրում Ռուսաստան տեղափոխվելու փաստը. «Պարսկաստանում ծայր առած խառնաշփոթությունների և վտանգների պատճառով,— գրում էր Հարություն Լազարյանը, Աղազար Լազարյանի եղբայրը,— ինչպես ես, Ձեր խոնարհ ծառան, այնպես էլ իմ հիշյալ եղբայրը (Աղազար Լազարյանը — Վ. Դ.) մեր ամբողջ ընտանիքով և կապիտալով, հիմնվելով երանելի և հավիտենական փառաց հիշատակի արժանի նորին կայսերական մեծության Ձեր ամենասիրելի ծնողի հուսադրումների վրա, եկանք ռուսական կայսրություն և այստեղ նշանակալից վաճառականական գործառնություններ ծավալեցինք ու մանուֆակտուրան ընդարձակեցինք... Դառնվելով Ձերդ կայսերական մեծության հովանավորության ներքո, մենք մտադրվել ենք օտար պետություններում գտնված մեր կապիտալները ստանալով՝ միավորել և մեր ֆաբրիկաներն ու գործառնությունները այստեղի կայսրության մեջ բազմապատկել»[23]։

Այս քաղվածքից երևում է, որ Ռուսաստան տեղափոխվելով Պարսկաստանում ստեղծված ներքին անբարենպաստ իրադարձությունների հետևանքով Լազարյանները մտադիր էին ոչ միայն առևտրական գործառնություններով զբաղվել, այլև «բազմապատկել» իրենց ֆաբրիկաները, այսինքն զբաղվել ապրանքային արտադրությամբ։ Եվ իսկապես, Ռուսաստան գալուց մի քանի տարի անց, 1758 թ., նրանք Իգնատի Շերիմանի որդի Զաքար Շերիմանից գնեցին Ֆրյանովոյի մետաքսագործական մանուֆակտուրան[24]։ Դեպի ապրանքային արտադրության ընդգծվառը նրանց մղում էր այն պատկառելի դրամական հարստությունը, որ կենտրոնացած էր նրանց ձեռքում։ Դեռևս 1741 թ., երբ Սպահանում Խոջա Նազարեթի երեք որդիները՝ Հարությունը, Մանուկը և Աղազարը միավորեցին իրենց դրամագլուխները միասնական առևտրական գործառնություններ կատարելու համար, սրանցից Հարությունը շրջանառության մեջ մտցրեց 670 թուման, Մանուկը՝ 900 և Աղազարը՝ 1000 թուման[25]։ Բանկարժեք մետաքսյա կերպասեղենի արտադրությունը պահանջում էր ունենալ մեծ քանակությամբ շրջանառու կապիտալ, որովհետև մետաքս գործելը շափազանց շատ ժամանակ էր պահանջում, չխոսելով այն մասին, որ լավորակ արտադրանք տալու համար անհրաժեշտ էր ձեռք բերել մետաքսի հումույթի լավագույն տեսակները և ամենաթանկարժեք ներկերը։ Այստեղից էլ պարզ է, որ ուզ դնելով մետաքսագործության ասպարեզը՝ Լազարյանները պետք է ունենային արտադրության այդ ճյուղին համապատասխան դրամական միջոցներ։

Լազարյանները ճիշտ էին գրում, որ մտադիր են բազմապատկել ֆաբրիկաները։ 1767 թ. Հովհաննես Լազարյանը հոր անունից դիմեց Եկատերինա II-ին, որպեսզի Վոլգա գետի մոտ, Ախտյուբա գետի վրա բնակություն հաստատած գյուղացիներին իրենց ունեցվածքով տան իր հորը մշանջենական և ժառանգական տիրակալության իրավունքով, պարտավորվելով նրանցից յուրաքանչյուր շնչի համար վճարել 30-ական ռուբլի[26]։ Ախտյուբայի ափերին դեռևս 1720 թ. Պետրոս I-ի կարգադրությամբ պետք է հիմնվեր մետաքսագործարան, սակայն այդ դադափարը իրագործվեց միայն 1757 թ., երբ Աստ-

[23] АВПР, ф. «Сношения России с Арменией», оп. 100/1, д. 1. (1761 г.), л. 1.
[24] ЦГАДА, ф. 1252, д. № 3006, л. 28.
[25] ՀՍՍՌ Պետ. Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթապ. 101, վավերագիր 1, թ. 1։
[26] ЦГАДА, ф. 1252, оп. 1, д. 1689, л. 81.

բախանի պետական այգիների կառավարիչ Պարոբիչին կարգադրվեց հիմնել Բեզրոդնոյե կամ Վերխնեախտյուբինսկոյե, իսկ շուտով նաև Նիժնեախտյուբինսկոյե գյուղերը։ Արդյունքներն անբավարար էին, ուստի Եկատերինա II-ը այդ գործը հանձնարարեց Աստրախանի նահանգապետ Բեկետովին, որը ծանոթանալով այդ վայրին՝ հույս հայտնեց, որ տարեկան 80 փութ բամբակ կստացվի։ Բայց Բեկետովի հույսերն ի դերև ելան, քանի որ աննշան էր ստացվող հումքի քանակը[27]։ Աղապար Լազարյանն իր հերթին դիմել էր նահանգապետ Բեկետովին Ախտյուբայի մետաքսագործարանի հարցով։ Ուստի վերջինս, դոհունակությամբ ընդունելով այդ դիմումը, որը կազատեր նրան դլխացավանք պատճառող հոգսերից, 1768 թ. ապրիլի 11-ին գրում է արքունիք, որ չնայած վերջին տարիներիս որոշ հաջողություն կա Ախտյուբայի մետաքսագործարանի արտադրության մեջ, բայց և այնպես հարկ է այն հանձնել Մոսկվայի մեշչանին Լազարյանին, որը երկար տարիներ ապրել է Պարսկաստանում, շատ հմուտ է մետաքսի արտադրության հետ կապված գործերին, որ նա Ռուսաստանում գտնված բավականաչափ երկար ժամանակամիջոցում եղել է ջանասեր և իր «բարի վարքով» Մոսկվայի մետաքսագործական ֆաբրիկան հասցրել է «գերազանցագույն» դրության. ուստի կասկած չի կարող լինել, որ Լազարյանը ամեն ինչ կանի, որպեսզի Ախտյուբայի մետաքսագործարանն էլ հասցնի «ծաղկյալ» դրության։ Ելնելով այս ամենից, Բեկետովը խնդրում էր ընդառաջել Լազարյանի ցանկությանը[28]։ Իր խնդիրքը հարգվելու դեպքում Հովհաննես Լազարյանը պարտավորվում էր ոչ միայն «մետաքսագործարանը հասցնել ցանկալի դրության», այլև խոստանում էր հիմնարկել նաև «ուրիշ օգտակարագույն պլանտացիաներ», տվյալ վայրում բնակեցնելով վարպետ օտարերկրացիների և դրանով իսկ օրինակ հանդիսանալով այդ անձնավորությունների համար, որոնք անշուշտ կհետևեն իր օրինակին, եթե տեսնեն, թե ինչպիսի մեծ շահ կարելի է ստանալ, մի բան, որ դեռևս «նրանց մտքովն իսկ բնավ չի անցել»[29]։ Սակայն ոչ Լազարյանների աղերսագրերը և ոչ էլ նահանգապետ Բեկետովի միջնորդությունը ցանկալի արդյունք չտվեցին։ Հավանական է, որ այդ բանին մեծապես խոչընդոտեց 1762 թ. մարտի 29-ի հրամանագիրը, որը ոչ-ազնվական ծագում ունեցող անձանց արգելում էր ֆաբրիկաների համար գյուղեր և գյուղացիներ դնել։

Դնելով Ֆրյանովոյի մետաքսագործական ֆաբրիկան, Լազարյանները մատակարարված էին արտադրաբանակի ավելացմամբ։ XVIII դարի 60-ական թթ. սկզբներին այնտեղ գործող դազգահների թիվը հասել էր 130-ի։ Բայց և այնպես զգացվում էր բանվորական ուժի պակաս, իսկ բանվորներ ձեռք բերելը շատ դժվար էր։ Ինչպես երևում է Աղազար և Պետրոս Լազարյանների կողմից Եկատերինա II-ին 1763 թ. մատուցված խնդրագրից՝ նրանք այնքան ջուլհակներ ունեին, որքան և դազգահներ։ Այդ իսկ պատճառով էլ, երբ ջուլհակներից որևէ մեկը հիվանդության պատճառով կամ որևէ մի այլ առիթով բացակայում էր ֆաբրիկայից, նրա դազգահը պարապ էր մնում։ Բացի այդ, բանվորներից շատերն արդեն ծերացել էին և սպառնալիք կար, որ շուտով

[27] В. Селевский, Крестьяне в царствование императрицы Екатерины II, т. I, СПб., 1881, էջ 562—578։

[28] ЦГАДА, ф. 1252, д. 1689, лл.: 99—101.

[29] Նույն տեղում, лл.: 81 об.— 82.

շարքից դուրս կգան։ Ծնված երեխաների թիվը, իր հերթին, բավարար չէր, որպեսզի վերարտադրեր աշխատուժը։ Այս հանգամանքը խիստ բացասարար էր անդրադառնում մետաքսագործական ֆաբրիկան ընդարձակելու և արտադրանքի քանակը բարձրացնելու ընթացքի վրա։ Թեև 1760 թ., համաձայն «Մանուֆակտուր-կոլեգիայի» անդամ Միխայիլ Օզարի զեկուցագրի (որտեղ Լապարյանների ֆաբրիկան նկարագրված էր որպես լավագույնը Մոսկվայում)[30], Լաղարյաններին թույլատրվել էր առանց հողի գյուղացիներ գնել ֆաբրիկայի համար, բայց 1762 թ. մարտի 29-ի հրամանագիրը արգելք էր հանդիսացել այդ ուղղությամբ գործնական քայլեր անելուն։ Իրենց աղերսագրում Լապարյանները բացատրում էին, որ մետաքսագործության արհեստին ծանոթ ապատավարձու բանվորներ գտնել չեն կարող, քանի որ դա Ռուսաստանում քիչ տարածված արհեստներից մեկն էր։ Եթե նույնիսկ գտնվելու էլ լինեին նման ապատավարձու բանվորներ, ասում էին Լապարյանները, ապա միևնույնն է, նրանց վրա հույս դնել չէր լինի, քանի որ միառժամանակ աշխատելուց հետո պետք է թողնեին և գնային։ Շատերը նրանցից հեռանում էին ավելի շուտ, քան թե պարտավոր էին ըստ պայմանագրի։ Մեր կարծիքով, թեև ֆաբրիկանտներն այդ մասին լռում էին, ապատավարձու բանվորական ուժի կիրառումը նրանց համար այնքան էլ ցանկալի չէր, քանի որ վերջիններս համեմատաբար թանկ էին նստում նրանց վրա, բացի այդ, նրանց առկայությունը կարող էր քայքայիչ ազդեցություն ունենալ ճորտական կախման մեջ գտնվող բանվորների վրա։

Ճորտատիրական Ռուսաստանում մանուֆակտուրային արտադրության համար ստեղծված պայմաններում բանվորական ուժով ֆաբրիկաները ապահովելու միակ ելքը ֆաբրիկատերերը տեսնում էին ճորտ բանվորներ ունենալու հնարավորության մեջ։ Այդ իսկ պատճառով Լապարյանները իրենց աղերսագիրը վերջացնում էին խնդրանքով, որ իրենց ևս այնպես, ինչպես ֆաբրիկանտ Ռոնշարովին, թույլատրվի գնել ճորտ գյուղացիներ մանուֆակտուրայում աշխատեցնելու համար[31]։ Որ իսկապես Լապարյանները հարկադրված էին դիմում այդ միջոցին, որ նրանց հետաքրքրում էր բանվորական ձեռքերով մանուֆակտուրան ապահովելու հարցը և ոչ թե ճորտ գյուղացիներ ունենալու բաղձանքը, երևում է այդ նույն առիթով Հովհաննես Լապարյանի կողմից Եկատերինա II-ին գրած աղերսագրից։ Անդրադառնալով հոր խնդրանքին՝ նա գրում էր, որ իր հայրը «նպատակ չի հետապնդում ունենալով իր գյուղացիները, և կրելով սոսկ գործարանատիրոջ անուն, օգտվել գյուղացիական աշխատանքից» (այսինքն ստանալ ֆեոդալական ռենտա—Վ. Դ.), որ «նա միշտ էլ ավելի հաճույքով ձեռնամուխ կլիներ կատարելու այդ աշխատանքները (խոսքը ֆաբրիկայի մասին է — Վ. Դ.) ապատավարձու մարդկանց միջոցով, առավել ևս այն բանի համար, որ պարտավոր չէր լինի կերակրելու անդամալույծներին և աշխատանքի անընդունակ մարդկանց». բայց ապատավարձու բանվորական ուժ ճարելը բավականին բարդ և դժվարին հարց է. և եթե նույնիսկ հավաքելու լինի տարբեր տեղերից իրենց անձնագրերով եկող անձնավորությունների, ապա այդպիսիները սովորաբար միառժամանակ

[30] Материалы по истории крестьянской промышленности, т. II, М.—Л., 1950, էջ 76 և հտ.։

[31] ЦГАДА, ф. 1252, д. 1689, лл. 55—56 об.

մնալով և հազիվհազ ծանոթանալով արհեստին՝ կհեռանան կամ ինքնակամորեն կամ էլ իրենց տիրոջ ցանկության համեմատ, ինչպես նաև անձնագրերի ժամկետը լրանալու պատճառով»[32]։

Նոր մետաքսագործարան և ֆաբրիկա հիմնելու փորձերը շարունակվեցին նաև հետագա տարիներին։ 1777 և 1783 թթ. Հովհաննես Լազարյանը երկու անգամ փորձեց Հյուսիսային Կովկասում ձեռք բերել թթենիներ տնկելու համար պիտանի հողեր։ Եթե նրա առաջին փորձը վերջացավ անհաջող[33], ապա երկրորդ անգամ համաձայնությունը ստացվեց, բայց անհայտ պատճառներով այդ գործը բարձիթողի արվեց[34]։

Սակայն, թեև մետաքսագործական նոր ֆաբրիկաներ կառուցելու Լազարյանների մտադրությունը չիրագործվեց, նրանք այնուամենայնիվ ընդհանրապես ձեռք չքաշեցին իրենց կապիտալը ապրանքային արտադրության ոլորտը մտցնելուց։ Շուտով նրանց տեսնում ենք արդյունաբերության մի այնպիսի լուրջ ճյուղում, ինչպիսին լեռնարդյունաբերությունն էր սև մետալուրգիան։

XVIII դարի կեսերին մենք նկատում ենք ուժեղ ձգտում դեպի լեռնարդյունաբերական ձեռնարկությունները ոչ միայն վաճառականական կապիտալի ներկայացուցիչների, այլև տոհմիկ ազնվականության պարագլուխների կողմից։ Այդ առթիվ ակադեմիկոս Ստրումիլինը գրում է. «Արդեն 1750-ական թվականների սկզբներից դեն նետելով ազնվականական ամեն մի գոռոզամտություն, պղնձի և երկաթի առևտուր անող գործարանատերերի թվում, նախկին դարբինների և չարչիների հետ միասին, հայտնվում են նաև տոհմիկ ազնվականներ Ա. Ի. Շուվալովը (1751), նրա եղբայր՝ Ելիզավետայի ֆավորիտ Պ. Ի. Շուվալովը (1753), կանցլեր Մ. Լ. Վորոնցովը, սրա եղբայր՝ գեներալ-անշեֆ կոմս Ռ. Լ. Վորոնցովը, ֆելդմարշալ կոմս Պ. Ի. Ռեպնինը (1755), կամերգեր՝ կոմս Ի. Գ. Չերնիշովը, կամերգեր՝ կոմս Ս. Պ. Յագուժինսկին, լեյբ-գվարդիական Ա. Գուրևը (1755), իշխաններ Մ. Մ. Գոլիցինը, Շախովսկոյը և ուրիշներ»[35]։

Սակայն արդյունաբերությունը տալիս էր ոչ միայն բարձր շահույթ, այլև պահանջում էր խոշոր կապիտալ ներդրումներ, մի բան, որ ի վիճակի չէին անելու ապրանքային արտադրությամբ զբաղվող այս ազնվականները։ Ուստի զարմանալի չէ, որ շատ շուտով գրեթե նրանք բոլորն էլ հայտնվեցին կոտրած տաշտակի առջև։ Այդ բանն է ապացուցում թեկուզ այն հանգամանքը, որ իր ձեռնարկությունները փրկելու նպատակով կոմս Ա. Ս. Ստրոգանովը 1771 թ. հարկադրված էր դրանք կապալով տալու Լազարյան եղբայրներին, որոնք վեց տարի շարունակ գործի էին դնում Ա. Ս. Ստրոգանովի ձեռնարկությունները[36] և շնորհիվ ներդրած կապիտալի՝ փրկեցին այն կորստից։ Այն բանը, որ արդեն իսկ ճորտատիրական աշխատանքի վրա հիմնված Ուրալյան լեռնային արդյունաբերական տնտեսությունը կարիք ուներ կապիտալների,

---

32 ЦГАДА, ф. 1252, д. 1689, лл. 81—82.

33 Центральный государственный исторический архив в Ленинграде (ЦГИАЛ), ф. 880, оп. I, д. 13, лл. 96—97.

34 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 68, лл. 90, 91 и 99.

35 С. Г. Струмилин, История черной металлургии в СССР, т. I, Москва, 1954, с. 199.

36 ЦГАДА, ф. 1252, д. № 1692, лл. 110—144 об.

որոնք կթարմացնեին և կընդարձակեին արտադրությունը, վկայում է նաև մի այլ պարագա՝ Ստրոգանովների երբեմնի հզոր տնտեսության XVIII դարի երկրորդ կեսին ապրած խոր ցնցումները, որոնց հետևանքով նրանց մի շարք կալվածքներ վաճառվեցին և Ստրոգանովների երբեմնի մոնոպոլ տիրույթներում հայտնվեցին նոր «մասնակիցներ», որոնց թվում նաև հայերը։ Վերջիններս հնարավորություն ունեցան ոտք դնելու լեռնարդյունաբերության ասպարեզ միայն այն բանից հետո, երբ իրենց վրա վակցրին ռուսական ազնվականի պիտակը[37]։ Միայն ազնվականությունն ու սպասյական աստիճանն էր եկատերինյան Ռուսաստանում հնարավորություն ստեղծում վաճառականների շարքերից ընկնել արդյունաբերողների շարքերը։ Հայերը թերևս առաջիններից էին, որոնք ընթացան այդ ուղիով՝ վաճառականությունից բարձրանալով ազնվական-արդյունաբերողների աստիճանի։

Դառնալով լեռնարդյունաբերողներ, հայերը շեշտը դնում էին հենց արտադրությունից ստացվող շահույթի և ոչ թե ֆեոդալական ռենտայի վրա[38]։ Արտադրական պրոցեսների մեքենայացում և բարելավում՝ արտադրաքանակի բարձրացման համար՝ սա էլ երկրորդ մոմենտն էր, որ պետք է դրվեր ուշադրության կենտրոնում և, վերջապես, գործող գործարանների թվական աճը։

Հայ վաճառականական կապիտալից արդյունաբերականին անցնելու արտահայտություններից մեկն էր, անշուշտ, 1781 թ. Պետերբուրգում հայկական առաջին տպարանի բացումը Նոր-Ջուղայի հայտնի վաճառական Գրիգոր Խալդարյանի կողմից։ Խալդարյանի սնանկացումը և պարտքերի տակ ընկնելը խոսում էր միայն և միայն այն մասին, որ դեռևս արտադրանքի այդ տեսակը անհրաժեշտ սպառողական պահանջ չուներ։

Ներկա սեղմ ակնարկում բերված փաստերը ցույց են տալիս, որ կապիտալի նախնական կուտակումը հայ վաճառականական կապիտալի ներկայացուցիչների մոտ բավական բարձր աստիճանի էր հասել։ Արդեն XVIII դարի սկզբներից նրանց որոշ մասի մոտ նկատվում է իրենց ձեռքում կուտակված դրամական խոշոր միջոցները արտադրության գանազան ճյուղերի և հատկապես մետաքսագործության մեջ ներդնելու ձգտում։ Այստեղ մենք գործ ունենք վաճառականական կապիտալից արդյունաբերականին անցնելու այն առաջին ուղու հետ, որի մասին խոսում է Կ. Մարքսը «Կապիտալում»։

Պարսկաստանում XVIII դարի 40-ական թվականներին ստեղծված խառնաշփոթ իրադրության հետևանքով հայ վաճառականական կապիտալի ներկայացուցիչներից շատերը ընդմիշտ լքում են Նոր-Ջուղան և հաստատվում Ռուսաստանում։ Հենց այդ թվականներին է, որ մենք հայ վաճառականության շրջանում նկատում ենք մանուֆակտուրաների ստեղծման առավել մեծ թափ։

Ցարական կառավարությունն ինքը շահագրգռված էր գարկ տալու մանուֆակտուրաների կառուցմանը և Պարսկաստանի հետ կատարվող առևտրի հետագա զարգացման ընթացքում բոլոր տեսակի հնարավորություններ էր ստեղծում, որպեսզի առավել մեծ քանակությամբ հայ վաճառականներ գան Պարսկաստանից Ռուսաստան։ Այդ գործում ռուսական կառավարությունը բավական մեծ հաջողությունների հասավ։

[37] ЦГАДА, ф. 1252, д. № 1682, л. 102.
[38] ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. № 32, л. 25

Հայ վաճառականական կապիտալի զարգացման պատմության համար շափազանց բնորոշ է Լազարյանների օրինակը։ Երբ հետևում ենք այն ջանքերին, որ թափում էին նրանք արդյունաբերության մեջ հաստատվելու կամ իրենց մանուֆակտուրային ձեռնարկությունն ընդարձակելու համար, իսկապես համոզվում ենք, որ կապիտալի նախնական կուտակումը արդեն մեծ չափերի էր հասել XVIII դարի Ռուսաստանում և միայն ճորտատիրական կարգերի առկայությունն էր, որ արգելակում էր, պայմաններ չէր ստեղծում արդյունաբերական կապիտալի զարգացման համար։

Ստեղծված դժվարությունները հաղթահարելու և ապրանքային արտադրության համար անհրաժեշտ աշխատուժ ձեռք բերելու նպատակով Լազարյանները կատարում են անցում վաճառականության շարքերից դեպի ազնվականության շարքերը և այդ բազայի հիման վրա կուտակած կապիտալը ներդնում ապրանքային արտադրության ոլորտը։

Լեռնարդյունաբերությունը կարիք ուներ նոր, լրացուցիչ ներդրումների, որ համարյա թե անհնարին էր ֆեոդալական Ռուսաստանի պայմաններում։ Այդ և վկայում այն հանգամանքը, որ 1760—1800-ական թթ. երկրում կառուցվել էին ընդամենը 6 դոմնային գործարաններ, որոնցից մեկը՝ Կիզելինը, կառուցվել էր Հովհաննես Լազարյանի կողմից։ Նա իր գնած Ջերմոսի դոմնային գործարանը, որը մտնում է այդ 6 կառուցված գործարանների մեջ, հիմնովին վերանորոգել էր գնումից մեկ-երկու տարի անց։ Լեռնարդյունաբերության բնագավառում կատարված այս համեստ քայլը վկայում էր, որ այստեղ մեծ ներդրումների կարիք կար տակավին։ Կապիտալի նախնական կուտակումը, այսպիսով, հայ վաճառականության մոտ իսկապես մեծ չափերի էր հասել։

СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОГО КУПЕЧЕСКОГО КАПИТАЛА В РОССИИ

В. А. ДИЛОЯН

(Резюме)

После переселения армян из восточной части Армении в Персию и основания города Новой Джульфы на пороге XVII в. армянский торговый капитал начал играть видную роль во внешней торговле этой страны. Однако распад Сефевидского государства в результате нашествия афган и усиления гнета в годы царствования шаха Надира и после его смерти нанес непоправимый удар армянской торговой буржуазии. В эти годы особенно усиливается утечка армянского купеческого капитала в Россию и Индию. Еще в начале XVIII в. накопление капитала у отдельных представителей армянской торговой буржуазии достигло такой высокой степени, что возникла тенденция вложения его в промышленные предприятия. Если это было невозможно в условиях Персии, то для данной цели существовали определенные благоприятные условия в России. В результате этого, а также благодаря предоставляемым армянскому купечеству привиллегиям, в XVIII в. в России возникает ряд предприятий, особенно шелкоткацких, принадлежавших купцам-армянам. Так, появ-

ляются шелковые фабрики джульфинского купца Игнатия Францева Шеримана в Москве, Макаровых и Ширваиова, братьев Буниатовых в Астрахани, братьев Манучаровых, Мануилова, Хахвердова и других в Петербурге и т. д.

В 40-х годах XVIII в. в Россию переехала известная семья купцов Лазаревых, сыгравшая заметную роль как в истории армянского освободительного движения, так и в развитии армянской культуры. Обладая крупным состоянием, Лазаревы купили фабрику Игнатия Шеримана и превратили ее в лучшую шелковую фабрику России второй половины XVIII в. Но они не остановились на этом. Став «российскими дворянами» и таким образом получив возможность приобретать крепостных, Лазаревы вскоре вложили свои капиталы в самую развитую отрасль промышленности России XVIII в.— в горнозаводскую — и превратились в крупных дворян-предпринимателей.

Приведенные выше и многочисленные другие примеры говорят о том, что уже в середине XVIII в. накопление капитала у многих армянских купцов достигло такой значительной степени, что армянский купеческий капитал проявлял явную тенденцию превращения в промышленный капитал.